ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 336 – Ա 19 օգոստոսի 2020 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Լ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 16-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 12-րդ կետի ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2006 թվականի փետրվարի 1-ի N 15-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 7-րդ կետի պահանջներն

որոշում եմ՝

1. Հաստատել 2020 թվականի օգոստոսի 20-ին՝ ժամը 11^{00}-ին, «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լ. Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Դաբաղյան Վահագն (Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի խորհրդական), Պետրոսյան Մարտին (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող), Ղուկասյան Վերգինե (մարզպետարանի քարտուղարության պետ), Հարությունյան Վանիկ (մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ), Վարդանյան Լուսինե (առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Մարտին Պետրոսյանին, քարտուղար՝ Վերգինե Ղուկասյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

19.08.2020

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SANOSYAN GNEL 17108300069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք.Գավառ